

26.249

ՀՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՅԱՍՏԻՈՒԹԵՆԾԿԵՆ ԽՈՐՀՈՒԹՅ

Գ. Ն. ԼԵԲԵԴԵՎ

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱՆ  
ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

334 · 6  
հ - 30

Պետական Հրատարակչություն, — Յերևան 1929

30 APR 2013

26.281

05 JAN 2010

ԿՈՒՑՆԵՑԵՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՄԱՄԻՒԹԵՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

334 5

30

## ፭. ሂ. ለተቻቻቻ

264

# ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱՆ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԵՐԸ



15375-17

Ամսական Հրատարակչություն, — Երևան 1929

## ԻՆՉ ՊԵՏք Ե ԻՄԱՆԱՆ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ- ՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայումս պետության, կուսակցության, հասարակայնության ամբողջ ուշադրությունը կենտրոնացած է լերկրի տնտեսական վերելքի գործի, և առաջին հերթին՝ սրա հետ կապված գյուղատնտեսության վերակառուցման գործի վրա։ «Անհրաժեշտ է լերկրի տնտեսական վերելքի գործի շուրջը գյուղացիության, չքավոր և միջակ գյուղացիների ներգրավումը աստիճանաբար բարձրացնել առաջին հեթին կոռպերացիալի միջոցով։ Անհրաժեշտ է ավելի համարձակ ու վճռականորեն աջակցել չքավոր և միջակ մասսաների նախաձեռնությանը կոլեկտիվ տնտեսությունների զանազան ձևերի, կուլտուրական ոճախների ստեղծման, գյուղատնտեսական ոգնության կազմակերպման, հողաշինարարության գործին ոգնելու, կոռպերատիվ ապարատի սացիրոնալիզացիալի, կոռպերացիալի մարմինների, գներին նկատմամբ՝ կոռպերացրած մասսաների հսկողության գործում և այլն։ Անհրա-

ժեշտ և ավելի համարձակ և վճռականորեն զարթեցնել և աջակցել մասսաների նախաձեռնությունը գլուղական տնտեսության մեջենացման, նրա ինտենսիվիկացիայի, աշխատանք վերցնող նոր կուլտուրաներ մտցնելու, կոռպերատիվ գործարանների շինարարության և այլ ասպարեզում, ասում ե Համ Կ (բ) Կ XV համագումարը սոցիալիստական ուղղիոնալացման խնդրի, և այս գործում մասսայական կազմակերպությունների գերի և նշանակության մասին իր բանաձեռնության մեջ, գլուղի աշխատանքների և պրոլետարական դեկտատուրայի պայմաններում, գլուղացիական տնտեսության զարգացման տարբերիչ առանձնահատկությունների առթիվ կուսակցության XV համագումարն ավելի վորոշակի խոսում ե յերկրի տնտեսական վերելքի գործում գլուղական տնտեսության կոլեկտիվացման գերի և նշանակության մասին:

«ԽՍՀՄ-ի սոցիալիստական զարգացման հիմնական նախադրյաններից մեկը գլուղի արտադրողական ուժերի վերելքը և գլուղացիական լայն մասսաների բարեկեցության աճումն ե: Սոցիալիստական քաղաքը կարող է իր հետեւից տանել գլուղը միայն այս ճանապարհով, ամեն կերպ նպաստելով անհատական սեփական արնատեսությունից, վորը կեռ յերկար ժամանակ կլինի

գլուղական տնտեսության բազան, դեպի նրա կոլեկտիվ ձևերն անցնելուն»...

«...Անցյալ տարիների, առանձնապես վերջին տարիների փորձը ամբողջովին և լիակատար հաստատեց Լենինի կոռպերատիվ պլանի ճշտությունը, ըստ փորի սոցիալիստական ինդուստրիան մանր-գլուղացիական տնտեսությունը հատկապես կոռպերացիայի միջոցով կտանի սոցիալիզմի հանապարհով, կոտրահիմության անհատական արտադրական միավորները վերածելով նոր տեխնիկայի հիման վրա (ելեկտրիֆիկացիա և այլն) խոշոր հասարակայնացրած տնտեսությունների, թե փոփոխման պլոցեսի մեջոցով և թե ավելի ու տվելի արտադրության վերակազմության և միավորման միջոցով:

Ներկա ժամանակաշրջանում անհատական մանր-գլուղական տնտեսությունները միավորելու և խոշոր կոլեկտիվների վերածելու աշխատանքը, պետք ե դրված լինի իբրև կուսակցության հիմնական խնդիր գլուղում...»:

Յեվ մենք գիտենք՝ կոլեկտիվ տնտեսություններն աճում են: Առաջավոր, չքավոր և միջակ ավելի գիտակից գլուղացիությունը լավ գիտե, վոր գլուղատնտեսության վերակառուցման, տնտեսական բարեկեցության կատարման գործում, դժվարությունների հաղթահարումը

հնարավոր ե և հեշտ ե վոչ թե բաժան-բաժան յուրաքանչյուր անհատական տնտեսության համար, այլ նրանց համախմբման դեպքում։ Հին ճշմարտությունը՝ «միությունը ուժ ե» — մինչեւ հիմա յել մնացել ե անդրդվելի ճշմարտություն։ Կոլտնտեսության մեջ համախմբված գյուղացիները, իբրև որենք, ձեռք են բերում գյուղական տնտեսությունը բարելավելու համար անհամեշտ մեքենաներ, գյուղատնտես են հրավիրում ծառայության, և կոլեկտիվի շրջակա գյուղացիության աջքի առաջ կոլեկտիվը ձեռք ե բերում լավ անսառւններ, ավելանում ե բերքը, կառուցվում են լավ շտեմարաններ, գոմեր, ոլանիբ-լուղ գործարաններ և այլն։ Անում են կոլեկտիվ կերպով կուտակվող արժեքները, բարելավվում ե կոլեկտիվում համախմբված գյուղացիների բարեկեցությունը և ապրելն ավելի գյուղանում ե։

Կոլեկտիվ տնտեսությունը միշտ ել պետությունից ստանում ե անհրաժեշտ աշակցություն։ Պետությանը անհրաժեշտ ե, վոր կոլտնտեսությունը ամրապնդվի ավելի արագ, իր աճման, տեխնիկայի և տնտեսավարության ավելի լավ ձևերի կիրառման միջոցով ստեղծելով իր հզորությունը և միաժամանակ ոգնելով ամրապնդել նաև մեր Միության տնտեսական հզորությունը։ Կոլեկտիվը այնպես պետք է կառավարի

իր տնտեսությունը, վորպեսզի որինակ դառնա և կոլեկտիվ խմբավորումից առաջմաս դեռ մի կողմ կանգնած շրջապատող գյուղացիությանը գործով ապացուցի տնտեսությունն այս կերպ տանելու շահագետությունը և նպատակահարմարությունը։

Պետությունը կոլեկտիվ տնտեսություններին տալիս ե լավ սերմացու, վարկով բաց և թողնում գյուղատնտեսական մեքենաներ, անսառւններ և տալիս ե գրամական վարկավորում։ Բացի իրենց միջոցներից և ուժերից, բացի պետական ոժանդակությունից, կոլեկտիվ տնտեսությունները ընկերական ոգնություն և աջակցություն ևս ստանում են կոռպերատիվ այն ընկերությունից, վորին նրանք անդամ են։ Բայց վերը թված բոլոր բարենպաստ պայմանների հետ մեկտեղ կոլեկտիվ տնտեսություններն իրենց առորդա աշխատանքների ընթացքում հանդիպում են դեռ շատ դժվարությունների, արգելքների և նույնիսկ բավականաչափ կատաղի թշնամիների։ Բոլոր արգելքները դեռ չեն վերացվել և դեռ բոլոր թշնամիները չեն անհետացել։ Գոյություն ունեն այնպիսի թշնամիներ, ինչպիսիքն են, կրակը, փոթորիկը, կարկուտը, հեղեղները, անսառւնների համաձարակներ և այլն։ Այս թշնամիները դեռ յերկար տարիներ կմնան

մարդու ստեղծագործական աշխատանքի և  
կյանքի ուղեկիցներ, և դեռ յերկար տարիներ նա  
կպայքարի նրանց դեմ և կաշխատի յենթար-  
կել նրանց իրեն ազդեցության։ Շատ հաճախ,  
չնայած բոլոր նախազգուշացումներին և նրանց  
դեմ համառ պայքարին, նրանք, այսուամենալ-  
նիվ, ներխուժում են տնտեսության մեջ և  
յերբեմն առաջ են բերում սարսափելի ավերում-  
ներ։ Յերկար տարիների համառ աշխատանքի  
պառուղը, կոլտնտեսության այսորվա բարեկե-  
ցությունը, կարող ե մի քանի ժամում կործան-  
վել շնորհիվ փոթորկի, կարկուտի, հեղեղի և  
հիվանդությունների։

Անհրաժեշտ է ունենալ կամքի մեծ ուժ,  
եներգիա և դեպի գործը սեր և հավատ, վոր-  
պեսզի այս ավերակների վրա սկսել նորից աշխա-  
տել։

Այնից ավելի ցավալին այն ե, վոր այս  
դժբախտ պատահարները կարծես թե դիտմամբ  
սպասում են ամենանարմար մոմենտին։ Հենց  
նոր են հնձած ցորենի խուրձերը դեղ տփել  
և կամ քաղած հացանատիկը լցըելամբարների մեջ,  
մեկ ել տեսար՝ հրդեհ։ Հենց նոր են կառուցել  
ամբար կամ վորեն ե գործարան, մեկ ել տեսար՝  
ալրվեց։ Դեռ յերեկ լցված հասկերով վոսկեզո՞ն  
արտը ուրախացնում եր յերկրագործին, իսկ

այսոր կարկուտը կամ փոթորիկը ամբողջովին  
տրորել են, ցեխ շինել։

Մի քանի որ առաջ ցեղալին կովերի, վոչ-  
խարների, խոզերի նախիրները, վոր պայծառաց-  
նում եին կոլեկտիվիստի դեմքը, այսոր արդեն  
թաղված են հողի տակ։ Այսպիսի գեղքերում տաս-  
նիակ, իսկ յերբեմն հարյուրավոր մարդկանց  
աշխատանքը կորչում ե անվերադարձ։

Արդյոք շատ կգանգեն այնպիսի մարդիկ,  
վորոնց ձեռքերը չի թուլանա այսպիսի դժբախ-  
տությունից։ Յերբեմն այդ դժբախտություն-  
ները հատ-հատ չեն գալիս, այլ իրար հետեւց  
են լինում։ Յեկ իսկապես՝ և հրդեհը, և անա-  
սունների կոտորվելը, և կարկուտը կարծես խոսք  
մեկ արած՝ միաժամանակ վրա չեն տալիս  
տնտեսությանը և քար ու քանդ են անում ամեն  
ինչ։ Բայց մարդիկ անզոր չեն այս դժբախ-  
տությունների դիմաց։ Մարդիկ միջոց գտան  
այս դժբախտությունների դեմն առնելու, այդ  
դժբախտությունները անզգալի, կամ պակաս  
զգալի դարձնելու տնտեսության բարերախտու-  
թյան հաճար։ Կուլտուրայի այս մեծ նվաճումը,  
տարերային դժբախտությունների դեմ պայ-  
քարելու միջոցը կոչվում ե ապահովագրություն։

Միայն անկուլտուրական, անհոգ և «գուցե»-  
ներով ապրող զյուղական տնտեսատերը

կարող ե չոգտվել այս միջոցից, իր տնտեսության  
բախտը պահպանելու համար:

Ի՞նչ ե ապահովագրությունը: Այն ժամա-  
նակ, յերբ այս կամ այն դժբախտության դեմ  
պարագարելու միջոցներն անոգուտ դարձան,  
յերբ դժբախտությունը տնտեսությանը վորոշ  
նութական վնաս հասցրեց, հարց ծագեց տու-  
ժողներին ոգնելու մասին: Ի՞նչ կերպ և վեր-  
տեղից ստանալ այդպիսի ոգնություն: Ստանալ  
նրան բարեգործության ձեռվ, այսինքն կա-  
խում ունենալ պատճականությունից, վստահ  
չվիճել թե ոժանդակություն ստանալու և թե նրա  
չափի մասին—չի կարելի: Նման ոժանդակությունը  
պետք ե ունենա նախորդք որինականացրած  
և վորոշակի ձեւեր: Նա պետք ե հիմնված լինի  
կազմակերպված այնպիսի սկզբունքների վրա,  
վորոնք վոչ վորի համար ստորացուցիչ չեն և  
հնարավորություն են տալիս լրիվ չափով հա-  
տուցելու դժբախտության պատճառած վնասը:  
Հենց ապահովագրությունն ել հանդիսանում ե  
դժբախտության դեպքում ոգնելու ալի ձեռ:  
Փոխադարձության սկզբունքի վրա կազմակերպ-  
ված ապահովագրությունը հանդիսանում ե կո-  
ռոպերացիալ ամենամաքուր ձեռ, վորը իրակա-  
նացնում ե կոռպերատիվի հիմնական լոգունգնե-  
րից մեկը՝ «բոլորը մեկի համար, մեկը բոլորի

համար»: Ի՞նչ ե կոռպերատիվ ապահովագրու-  
թյունը:

Խորհրդային Ս.Հ. Միությունում ապահովա-  
գրությունը հանդիսանում ե Խորհրդային իշխա-  
նության մենաշնորհը: Վոչ վոր իրավունք չունի  
զբաղվելու ապահովագրությամբ և միայն կոռպե-  
րացիալ համարբացառություն ե արված: 1921 թ.  
հոկտեմբերի 6-ի և հետեւալ 1925 թ. սեպտեմ-  
բերի 18-ի որենքով կոռպերատիվ կազմակեր-  
պություններին իրավունք ե տրված ամբողջ ի-  
րենց կոռպերատիվ կուլքն ապահովագրել իրենց  
կոռպերատիվ ապահովագրության միջոցով: Կա-  
ռավարությունը, տալով կոռպերացիալին այս  
իրավունքը, ի նկատի ուներ վոչ միայն ապա-  
հովել կոռպերացիալ ֆինանսական դրությունը,  
այլ և գլխավորապես բնակչության մեջ ինքնա-  
գործունեյություն առաջցնել:

Կոռպերացված բնակչության ձեռքը տալով  
ապահովագրությունը, կառավարությունը դրա-  
նով իսկ ներգրավեց նրան այս գործի անմի-  
ջական մասնակցության: Կոռպերատիվ ապահո-  
վագրությունը նպատակ դնելով կոռպերատիվ  
կազմակերպությունների և կոլեկտիվ տնտեսու-  
թյունների գուլքի ապահովագրումը զանազան  
տեսակի տարերային պատճականություննե-  
րից մեկը՝ «բոլորը մեկի համար, մեկը բոլորի

ակառւմուլյատորներից մեկը, այսինքն՝ բնակչության սեփական միջոցները կոռպերացիալի մեջ ներդրավելու դրդիչը։ Ապահովագրական պրեմիան (ապահովագրման հատուցումներ) հավաքվում է ապահովագրության կոռպերատիվ կազմակերպության կողմից և մնում է կոռպերատիվ միջավայրում։ Ապահովագրական կոռպերացիաի դրամական բոլոր միջոցները պահպում են կոռպերատիվ բանկում, ուժեղացնում են նրա գրամագլուխները և հնարավորություն են տալիս ավելացնելու կոռպերացիալի և կոլտնտեսությունների վարկավորումը։

Գոյություն ունեցող կոռպերատիվ Ապահովագրական Միությունը կազմակերպված է և եր գոյությունը սկսել է 1921 թ. դեկտեմբերի 1-ից, բայց ապահովագրական գործառնությունները նա սկսել ե միայն 1922 թ. մարտի 1-ից։ Նա ապահովագրությամբ սպասարկում է գյուղատնտեսական, արդյունաբերական, բնակարանային-շինարարական, վորսորդական, ձկնորսական, հաշմանդամների կոռպերացիան և կոլեկտիվ տնտեսությունները։ Կոռպերատիվ Ապահովագրական Միության աշխատանքը տարեցտարի աճում է, վոր կարելի լի նկատել նրա բարականությունը աճման ներքև բերված տվյալներից։

1924 թ. . .	268,695	1927 թ. . .	2,474,594
1925 թ. . .	646,480	1928 թ. . .	4,017,085
1926 թ. . .	1,454,650	1929 թ. . .	6,000,000

Ապահովագրման դաշտի ընդգրկման աճման հետ միասին, աճում է նաև կոռպերատիվ Ապահովագրական Միության անդամների թիվը։ Համաձայն կոռպերատիվ ապահովագրության կանոնադրության՝ կոռպերատիվ Ապահովագրական Միության անդամ կարող են լինել միությունները և նախնական համախմբումները, բայց նրա անդամները գլխավորապես հանդիսանում են՝ կոռպերատիվների, կոլտնտեսությունների միությունները, կոլտնտեսությունների սեկցիաները, քանի վոր այս գեպքում նախնական կոռպերատիվ կազմակերպությունները և կոլտնտեսությունները կոռպերատիվ ապահովագրության իրավունք են ձեռք բերում այն բանի շնորհիվ, վոր նրանց համախմբող միությունները և սեկցիաներն արգեն կոռպերատիվ Ապահովագրական Միության անդամներ են։ Կոռպերատիվ Ապահովագրական Միության անդամ ընդունվելու համար, անհրաժեշտ է ուղարկել մի դիմում, իր կանոնադրությունը, վերջին տարվա հաշվետվությունը և վերցնել մի փայ, վորի արժեքը 25 ռ. լե։ Զայնի վճռական իրավունք ստանալու համար անհրաժեշտ է վերցնել 5 փայ։ Փալերի արժեքը կարելի լի մարել մաս-մաս։

Առ 1-ն հունվարի 1929 թ. Միության կազմի մեջ մտնում եր 673 անդամ փայտերեր, և, կարելի է ասել, վոր արտադրական կոռպերացիալի սիստեմի կոռպերատիվ միությունների մաշող մեծամասնությունը (մինչև 90%) ներգրավված եր Կոռպերատիվ Ապահովադրական ընկերության մեջ:

Փայտերերի թվի աճման հետ միասին, աճում եր նաև փայտաձարակին դրամագրուխը: Բայտ տարիների նա տալիս ե հետևյալ պատկերը՝

1924 թ. 103.295 1928 թ. 322.829

1925 թ. 215.305

1926 թ. 258.349 Յենթագրվում ե

1927 թ. 297.498 առ 1/1 1929թ. 450.000

Կոռպերատիվ Ապահովագրական Միությունը վեց տարվա ընթացքում հավաքել ե պահովագրական հատուցումներ՝

1923 թ. 362.282 1926 թ. 2.813.213

1924 թ. 770.700 1927 թ. 4.230.147

2925 թ. 1.664.285 1928 թ. 6.300.000

Բայց այս հատուցումների գանձումը կարող եր լինել և պետք ե լիներ ավելի շատ, յեթե, մի կողմից, կոռպերատիվ կազմակերպությունները և կողեկտիվ տնտեսություններն ընդհանրապես ավելի շատ մտահոգություն ցուցաբերելին իրենց պատկանած գույքն ապահովագրե-

լու նկատմամբ, իսկ, մյուս կողմից՝ ապահովագրելին նրան փոխադարձ ապահովագրության միջոցով:

Վնասների հատուցման համար, ամեն տարի կոռպերատիվ Ապահովագրական Միությունը ստեղծում է պահեստի միջոցներ, անցյալ տարվա հատուցման գումարներից հատկացումներ անելով: Տարեց-տարի այս պահեստի գումարներն ավելանում են, ապահովագրական դաշտի ավելացման, և հետևապես սրա հետ կապված վնասների աճման պատճառով:

1924 թ. 76.695 1926 թ. 1.050.475

1925 » 255.370 1928 » 1.913.432

1926 » 606.408 1929 » 3.000.000

Բայց բացի այս պահեստի միջոցներից, իր գրության կայունության և ըստ ապահովագրական գործառնությունների իր վրա վերցրած պարտավորումների լիակատար ապահովման համար, Կոռպերատիվ Ապահովագրական Միությունը վերաապահովագրում ե Պետապում:

Հստ իր գործառնությունների տարեց տարի կոռպերատիվ Ապահովագրական Միությունը ունենում ե մաքուր ոգուտ, վոր անպայման վկայում ե այն բանի մասին, վոր գործը կազմակերպված ե առողջ հիմունքների վրա և կանոնավոր ե տարվում:

Ոգուաը ըստ ապահների աճում եր հետև-  
լալ կերպ՝

1924 թ.	22.889	1927 թ.	229.285
1925 թ.	63.760	1928 թ.	279.146
1926 թ.	245.362	1929 թ.	350.000

Կոռպերատիվ Ապահովագրական Միությունը  
ապահովագրական գործառնությունները կատա-  
րում ե տարիքներով, զորոնք ավելի ցածր են  
մասնավոր ակցիոներական ընկերությունների-  
մինչպատերազմյան տարիքներից և քաղաքային  
(ՅԵՄСԿՕԵ) ապահովագրությունից։ Բայց չնայած  
իր այդ տարիքներին, միությունը հրդեհի դեմ  
և տրանսպորտային ապահովագրումից հա-  
վաքված պրեմիաների  $10^{\circ}/_0$ -ը մաքուր ոգուադից  
ապահովագրողին վերադարձնելով իշեցնում ե  
դրանք։

Վերադարձված գումարները ըստ տարինե-  
րի արտահայտվում են հետևելալ կերպով՝


1923 թ.	32.084	1926 թ.	250.673
1924 թ.	64.188	1927 թ.	337.991
1925 թ.	147.157	1928 թ.	450.000

Մաքուր ոգուատից մինչև  $6^{\circ}/_0$  հատկացվում  
ե փայտերերի փայտագրային դրամագլխին  
իբրև դիվիդենդ, կուլտուր-էրթական կարիքների  
և Կոռպերատիվ Ապահովագրական Միության կա-  
ռանադրությամբ նախատեսված դրամագլուխների

ստեղծման։ 1926 թ. Կոռպերատիվ Ապահովա-  
գրական Միության լիազորների ժողովն անհրա-  
ժեշտ գոտավ կազմակերպել հատուկ ֆոնդ այնպիսի  
շենքեր կառուցելու համար, վորոնք հրդեհից  
անվտանգ լինեն։ Այս ֆոնդը կազմակերպված ե  
մաքուր ոգուատներից արած հատկացումներից և  
գտնվում է Համկոռպահանկում, վորը մասնակի  
կերպով աւտեղացնում ե այդ ֆոնդը իր միջոցներով։

Կոռպերատիվ վորը կազմակերպություն-  
ներ իրենց ստացած տաստոկուային վերադարձ  
գումարները հատկացրին հրդեհի դեմ դիմացող շեն-  
քերի կառուցման հատուկ ֆոնդին և հրդեհների  
դեմ պայքարող զանազան ձեռնարկումների համար։

1927/28 թվին Կոռպերատիվ Ապահովագրա-  
կան Միության միջոցով կազմակերպված ֆոն-  
դից տրված ե 44 լիրկարատև վարկ  $400.000$  ռ.  
դումարով. վարկերը տրվում ելին կոռպերատիվ  
զանազան կազմակերպություններին և կոլտնտե-  
սություններին, վորոնք Կոռպերատիվ Ապահո-  
վագրական Միության անդամ են. նրանք այդ  
վարկերը պետք ե ոգուագործեցին արդյունաբե-  
րական ձեռնարկությունների կազմակերպման,  
գլուղատնեսական մթերքների վերամշակման,  
պահեստաների, արհեստանոցների, ջրմուղների ու  
արագ աճող և պաղատու ծառերի անկարաննե-  
րի (ՊԻՏՈՄԱԿ) կազմակերպման։ Այսպիսով, չնա-  
րի (ՊԻՏՈՄԱԿ) կազմակերպման։



15375-37

լած նըան, վոր Կոռպերատիվ Ապահովագրական Միությունը ըստ իր նպատակների հատկության կոռպերացիայի անմիջական աշխատանքներին չի մասնակցում, բայց և այնպես այս դեպքում նա ակտիվ կերպով դուրս է գալիս կոռպերացիայի առաջ դրված՝ կապիտալիստական շինարարության և գյուղական տնտեսության ինդուստրիալիզացիայի խնդիրների իրականացման գործում:

Տվյալ մոմենտում կոռպերատիվ Ապահովագրական Միությունը կանգնած է այս ճանապարհի սկզբին միայն, և պետք է բոլոր միջոցները ձեռք առնել, վորպեսզի այս աշխատանքը ծափալի և զգալի չափերի հասնի: Սրա համար անհրաժեշտ է, վոր կոռպերատիվ և կոլեկտիվ բոլոր կազմակերպություններն ավելի սերտուն համախմբվեն իրենց կոռպերատիվ ապահովագրման շուրջը: Հարկավոր չե ոխոկ անել կոռպերատիվ և կոլեկտիվ կազմակերպություններին պատկանող գույքի նկատմամբ: Անհրաժեշտ է, վորպեսզի նրանց գույքը անպայման ապահովագրված լինի իրենց կոռպերատիվ ապահովագրման միջոցով:

Այս դեպքում կոռպերատիվ ապահովագրման դրամագլուխները կաճեն, կավելանա նաև ողուտը և մենք հնարավորություն կունենանք

մեծ հատկացումներ բանել կրակի դեմ դիմացող շենքերի կառուցման հատուկ ֆոնդին, և սրա հետ միասին ավելի ուժեղ ազդեցություն ունենալ կոռպերատիվ շինարարությանը և գյուղական տնտեսությունը նոր հիմունքներով վերակառուցելու գործին բնակչությունը ներգրավելու վրա:

Սպասարկելով արտադրողական կոռպերացիային և կոլեկտիվ տնտեսություններին, կոռպերատիվ Ապահովագրական Միությունը ընդգրըկում է ապահովագրության հետևյալ տեսակները.

1. Շինությունների, շարժական գույքի և ապրանքների ապահովագրումը կրակից:

2. Զիերի, խոշոր և մանր յեղջյուրավոր անասունների, մարախների, թռչունների և արժեքավոր մորթ ունեցող կենդանիների ապահովագրումը մահից և վոչնչացումից:

3. Գյուղատնտեսական հացահատիկային և կուլտուրական բույսերի մշակութների ապահովագրումը կարկտից:

4. Փոխադրման ժամանակ դժբախտ դեպքերից ապահովագրումը:

Սակայն գործի ֆինանսական կողմը դեռ չի սպառում կոռպերատիվ ապահովագրման ամբողջ նշանակությունը:

Սպասարկելով արտադրողական կոռպերացիայի կարիքներին, կոռպերատիվ Ապահովա-

գրական Միությունը ստեղծել է իր ներկայացուցիչների և բնիքաներկայացուցչունների լախածավալ մի ցանց, վորոնք կոռպերատիվ կազմակերպություններից անջատ չեն, այլ նրանց հետ համատեղված են, քանի վոր կոռպերատիվ Ապահովագրական Միության ներկայացուցչությունները առանձին ֆիզիկական դեմքեր չեն, այլ կոռպերատիվ խմբավորումների և վարկալին ընկերությունների միություններ են։ Նրանք խորապես շահագրգոված են վոչ միայն ապահովագրության շուտափույթ ձեւակերպումով և հրդեհի պատճառած վնասների հատուցմամբ, այլ իրրեվարկավորող կազմակերպություններ նրանք շահագրգոված են ամբողջ գույքի ապահովագրությամբ։ Նրանք հետեւում են նաև ապահովագրության ժամկետներին։ Այսպիսով ապահովագրության գործին հետեւում են թե ապահովագրվողը և թե ապահովագրվողը։ Գործնականում պատահում են դեպքեր, վոր կոռպերատիվ կազմակերպությունը կամ կոլեկտիվը չի ունենում դրամ ապահովագրական հատուցումները վճարելու համար, այլ ունենում են գյուղանատեսական մթերքներ և զանազան իրեր։ Այդպիսի դեպքերում փոխհատուցումը կատարվում է մթերքով և այլ իրերով։ Յերբեմն միությունը, վորի մեջ մտնում է կոլտնտեսությունը կամ առաջին աս-

արհճանի այլ կոռպերատիվ, իր անդամի փոխարեն մտցնում ե նրա ապահովագրական վճարները կամ լերաշխավորում ե նրան կոռպերատիվ Ապահովագրական Միության առաջ և դրանով թեթևացնում ե նրա դրությունը։

Այսպիսով թենոր ապահովագրումների ներգրավումը, թե ապահովագրումներ ինքելը և թե զանազան պատահականություններից առաջացած վնասների լուծարքը, — այս բոլորը կատարվում ե կոռպերատիվ ապարատի միջոցով, այսինքն հենց կոռպերացված տեղական բնակչության միջոցով։ Դժվար ե թվել բոլոր այն հարմարությունները և դրական կողմերը վոր տալիս ե կոռպերատիվ ապահովագրումը։ մենք թվեցինք միայն ամենաելական կողմերը, բայց սրանք ել բավական են, վորպեսզի հասկանալի լինի, թե ինչու կոռպերացիալի համար այնպես թանգ ե իր փոխադարձ կոռպերատիվ ապահովագրությունը։

Ի՞նչ պետք ե հիշի կոլտնտեսության ամեն մի անդամը։

Նա նախ և առաջ պետք ե իմանա և հիշի, վոր տարերացին դժբախտությունները պետությանը հսկայական վնասներ են պատճառում։ Վոչ մի մասնավոր պատահական ոգնությամբ հնարագոր չե վերջ տալ այդ դժբախտություն-

ներին և, պետք ե լենթադրել, յեթե չլիներ առահովագրությունը, տարերային դժբախտությունների պատճառովք աքայված աղքատ և անապաստան մարդկաց խմբերը կլցնելին մեր քաղաքներն ու գյուղերը, իբրև ապացուց կարող ենք մեջ բերել հետեւալ ներքեւ բերված աղյուսակը հրդեհների և հրդեհներից վնասված տնտեսությունների մասին:

Տարիներ	Իրդեհների թիվը	Իրդեհներից վնասված տնտեսութ. թիվը
1923/24 թ.	68,464	144,535
1924/25 թ.	93,475	178,378
1925/26 թ.	96,632	156,310

ԽՍՀՄ-ի գյուղերում հրդեհներից առաջացած ընդհանուր վնասը 200—250 միլիոն ռուբլու յէ հասնում տարեկան:

Կարկտից առաջացած վնասը հասնում է 40—50 միլիոն ռուբլու:

1923 թ.	Կարկտահար կ լեզել	981,400 հեկտ.
1924 թ.	»	1,433,000 »
1925 թ.	»	1,240,000 »
1926 թ.	»	1,164,000 »

Անասուններ են վոչնչանում՝ ձի 1 $\frac{1}{2}$  միլիոնից վոչ պակաս և մոտ 2 միլիոն լեզջուրա-

վոր անասուն: Խողերի, վոչխարների և թռչունների մասն ստույգ տվյալներ չունենք, բայց այդ վնասներն ել հաշվում են միլիոններով:

Թէ ի՞նչպես են անդրադառնում այդ դժբախտությունները առանձին տնտեսությունների վրա, կարելի լի է եզրակացնել մի կոմունայի կողմից Ապահովագրական Միության վերջերս ուղարկած ներքեւ բերված նամակից:

«Յերեք տարի մենք աշխատում ենք, առանց ձեռք ծալելու: Տնտեսությունը կարգի բերինք: Ամբողջ գույքը ապահովագրեցինք, բայց չմտածեցինք, վոր պետք ե ապահովագրել հավաքած բերքը: Հանկարծ հրդեհ պատահեց և մեր ամբողջ աշխատանքը իգուր կորավ: Մենք խնդրում ենք Ապահովագրական Միությանը ոգնել մեզ, տալ մեզ մի վոնե նպաստ, հակառակ դեպքում մեր տնտեսությունը պետք ե քայլավի»: Ահա մեկ ուրիշ նամակ ել. «Մեր ջրաղացը սպասարկում եր ամբողջ շրջանը և հանդիսանում եր մեծ ոժանդակություն մեր տնտեսության համար: Նոր վարչությունը ապահովագրական վճարների ժամկետը ուշացրեց, և ջրաղացը հրդեհից այրվեց առանց ապահովագրված լինելու: Խընդրում ենք ոգնել մեզ այս գժվարությունից դուրս գալու համար»: Այսպիսի նամակներ շատ հաճախ են ստացվում. անփութության, անուշադրության

ներին և, պետք ե յենթադրել, լեթե չլիներ ա-  
պահովագրությունը, տարերացին դժբախտու-  
թյունների պատճառովքայքայված աղքատ և անա-  
պաստան մարդկաց խմբերը կլցնելին մեր քաղաք-  
ներն ու գյուղերը։ Իբրև ապացուց կարող ենք  
մեջ բերել հետեւյալ ներքեն բերված աղյուսակը  
հրդեհների և հրդեհներից վնասված տնտեսու-  
թյունների մասին։

Տարիներ	Արդեհների թիվը	Արդեհներից վնասված տեսառութ. թիվը
1923/24 թ.	68,464	144,535
1924/25 թ.	93,475	178,378
1925/26 թ.	96,632	156,310

ԽՍՀՄ-ի գյուղերում հրդեհներից առաջացած ընդհանուր վնասը 200—250 միլիոն ռուբլու է համարում տարեկան։

Կարկտից առաջացած վնասը հասնում է  
40-50 միլիոն ռուբլու:

<i>1923</i>	<i>թ.</i>	<i>Կարկտահար կ լիդիլ</i>	<i>981,400</i>	<i>հեկտ.</i>
<i>1924</i>	<i>թ.</i>	<i>»</i>	<i>»</i>	<i>1,433,000</i>
<i>1925</i>	<i>թ.</i>	<i>»</i>	<i>»</i>	<i>1,240,000</i>
<i>1926</i>	<i>թ.</i>	<i>»</i>	<i>»</i>	<i>1,164,000</i>

Անասուններ են վոչնչանում՝ ձի 1 $\frac{1}{2}$  մի-  
լիոնից վոչ պակաս և մոտ 2 միլիոն չեղջյուրա-

վոր անսառուն։ Խողերի, վոշխարների և թռչունների մասին ստույգ տվյալներ չունենք, բայց այդ պատճեններն ել հաշվում են միլիոններով։

Թե ի՞նչպես են անդրագառնում այդ դժբախ-  
տությունները առանձին տնտեսությունների  
վրա, կարելի լե լեզրակացնել մի կոմունակի  
կողմից Ապահովագրական Միության վերջերս  
ուղարկած ներքեւ բերված նամակից.

«Յերեք տարի մենք աշխատում ենք,  
առանց ձեռք ծալելու։ Տնտեսությունը կարգի  
բերենք։ Ամբողջ գույքը ապահովագրեցինք, բայց  
չմտածեցինք, վոր պետք ե ապահովագրել հա-  
վաքած բերքը։ Հանկարծ հրդեհ պատճենց և  
մեր ամբողջ աշխատանքը իզուր կրուավ։ Մենք  
խնդրում ենք Ապահովագրական Միությանը ոգնել  
մեզ, տալ մեզ մի վոեե նպաստ, հակառակ դեպ-  
քում մեր տնտեսությունը պետք ե քայլալի։»  
Ահա մեկ ուրիշ նամակ ել. «Մեր ջրաղացը սպա-  
սարկում եր ամբողջ շրջանը և հանդիսանում եր  
մեծ ոժանդակություն մեր տնտեսության հա-  
մար։ Նոր վարչությունը ապահովագրական վճար-  
ների ժամկետը ուշացըեց, և ջրաղացը հրդեհից  
այրվեց առանց ապահովագրված լինելու։ Խընդ-  
րում ենք ոգնել մեզ այս դժվարությունից դուրս  
գալու համար։» Այսպիսի նամակներ շատ հաճախ  
են ստացվում. անփութության, անուշադրության

հետևանքով, մեկ ել տեսար, լավ դրված գործը քարպայվեց։ Ուստի և կոլտնտեսության ամեն մի անդամ պետք ե հիշի ապահովագրության մասին, հիշեցնի այդ մասին նաև իր վարչությանը և հետաքրքրվի, արդյոք ամբողջ գույքը ապահովագրված ե լրիվ գումարով, և ապահովագրման վճարները ժամանակին մուծվնելում են։

Վերստուգիչ հանձնաժողովը պետք ե միշտ և ուշադրությամբ հետեւի, իսկ կոլտնտեսության գլուխ կանգնած կոռպերատորները պետք ե լավ հիշեն, վոր նրանք հասարակական գործ են վարում, վոր կոլտնտեսության գույքը՝ հասարակական գույք ե, վոր նրանք պատասխանատու յեն նրանց հանձնված գույքի համար։ Յեթե հրդեհը, կամ մի վոնե այլ տարերային դժբախտություն ավերի կոլտնտեսությունը և յեթե նրա ղեկավարները ժամանակին չեն ապահովագրել գույքը և կոլեկտիվը մեծ վնասներ կրի, այդ դեպքում այդ ղեկավարների հասարակական անունը կիսայտառակվի։

Բացի այդ, նրանք պետք ե պատասխանատու լինեն նաև դատարանի առաջ։

Կոռպերատորը՝ հասարակական աշխատող ե, ամեն մի կոլեկտիվ պետք ե հիշի, վոր հասարակական գույքը չի կարելի յենթարկել առանց վնասների հատուցման վոչնչանալու որսկի։

Վհրատեղ պետք ե ապահովագրել կոլտնտեսության գույքը։

Կոլտնտեսության գույքը՝ շինությունները, գլուղատնտեսական ինվենտարը, անասունները, ցանքսերը և այլն—պետք ե ապահովագրել կոռպերատիվ ապահովագրման միջոցով։

Դեռ 1928 թ. սկզբին Համ. Կենտ. Գործկոմի 1927 թ. 22 ոգոստոսի վորոշումով կոլտնտեսություններին հանձնված գույքերի նկատմամբ վորոշանպարզություններ կային, բայց ներկայումս այդ մութ կողմը պարզված է։

ՌՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը իր 1928 թ. ապրիլի 27-ի վորոշումով պարզաբանեց, վոր այդ գույքը պետք ե ապահովագրվի կոռպերատիվ ապահովագրման միջոցով։ Համ. Կենտ. Գործկոմը իր 1928 թ. մայիսի 28-ի վորոշումով հաստատեց ՌՍՖԽՀ Ժողոմիսրհի այդ վորոշումը։

Վորոշման տեկստը հետևանք և «ՌՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում ե՝ գլուղատնտեսական կոլեկտիվներին նրանց կապալով վերցրած և փաստորեն նրանց տիրապետության տակ գտնվող հողերը և նմանապես գլուղատնտեսական կոլեկտիվների տերրիտորիայում գտնվող արդյունաբերական և օժանդակ ձեռնարկ կությունները հանձնելու մասին (1927 թ. Որենքն.

Ժողովածու, № 92, հոդվ. 65), Համամիութենական կենտրոնական Գործադիր Կռմիտելի և ՌՍՖԻՀ ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1927 թ. ոգոստոսի 22-ի վորոշման հիման վրա պարզաբանել, վոր գյուղատնտեսական այն կոլեկտիվները, վորոնք Համամիութենական կենտրոնական Գործադիր Կոմիտեի և ՌՍՖԻՀ ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1927 թ. ոգոստոսի 22-ի վերևերջած վորոշման 3 և 14-րդ հոդվածների հիման վրա ստացել են տիրապետելու, ոգտագործելու և կարգավորելու պետական գույքեր (շինություններ, գյուղատնտեսական ինվենտար և այլն), իրավուք ունեն այս գույքը իրենց անունով ապահովագրելու փոխադարձ կոոպերատիվ կազմակերպություններում, վորոնք գործում են ԽՍՀ Միության պետական ապահովագրման մասին գոյություն ունեցող կանոնագրության I հոդվածի հիման վրա (1925 թ. Որենք. Ժողով., №73, հոդվ. 537):

Ինչու կոլտնտեսությունների գույքը պետք է ապահովագրել կոոպերատիվ ապահովագրման միջոցով:

Կոլտնտեսությունը հանդիսանում է գյուղատնտեսական կոոպերացիայի վողջ սիստեմի բաղադրիչ մասը և իր կազմակերպչական և արնատեսական ամբողջ աշխատանքը տանում է և

պետք է տանի այն կոոպերատիվ կազմակերպությունների միջոցով, վորի անդամ են նա: Ի՞նչ կատացվեր, յեթե կոոպերատիվ ամեն մի կազմակերպություն, ամեն մի կոլտնտեսություն իր աշխատանքը առանձին տաներ, առանց ընդհանուր կապի: Նախ և առաջ նրանք յերբեք չելին կարող հասնել տնտեսական այն հզորության, վորը հնարավոր է լինում տնտեսական և կազմակերպչական աշխատանքների սերտ կապակցությամբ, իսկ մյուս կողմից, նրանք միշտ ել շփոթություն կմացնելին յերկրի մատակարարման և արտահանման աշխատանքների մեջ: Յեվ իսկապես, ինչ միաք կունենար այդ գեպքում առանձին տնտեսությունների համար կոլտնտեսություն կազմելը:

Այն գիտակցությունը, վոր աշխատանքի, միջոցների, կամքի և եներգիայի միացյալ ուժերով ավելի հեշտ և հասնել վորոշ նպատակի, կոլտնտեսության անդամներին ստիպեց ստեղծել կոլեկտիվ այժմյան տնտեսությունը: Այս կերպ պետք է ղեկավարվել նաև կոլտնտեսությունների և կոոպերացիայի առաջ ներկա պայմաններով դրված բոլոր հարցերի լուծման ժամանակ: Բայց, դժբախտաբար, անհատական տնտեսությունից հրաժարվելու և կոլտնտեսություն կազմելու ոգտակարությունը հասկացած վոչ

բոլոր գլուղացիները հասկանում և զիտակցում են հետագա համախմբման անհրաժեշտությունը և ձեռնտվությունը, այսինքն, առանձին բջիջների համախմբումը կոոպերատիվ վողջ սիստեմի տընտեսական աշխատանքների ասպարիզում։ Գործնականում պատահում են դեպքեր, յերբ կոլտնտեսություններն իրենց արտադրանքը հանձնում են վոչ թե կոոպերացիալին, այլ մասնավորին։ Ճիշտ ե, այսպիսի դեպքերը շատ հազվագյուտ են, բայց, այնուամենայնիվ, այսպիսի դեպքեր յեղել են։ Սոցիալիստական Հանրապետությունների մեր Միությունը իր տնտեսական վողջ աշխատանքը կառուցում ե ծրագրված կերպով, աշխատանքի առանձին ամեն մի ճյուղը, իր ամբողջ ողակներով պետք ե սերտորեն կապակցված լինի։ Կոոպերացիան գլուղական տնտեսության նոր ձևերով վերակառուցման, գլուղացիական կենցաղի վերակառուցման ամենակարևորագույն բնագավառներից մեկն ե, դեպի սոցիալիզմը առնող մեծ ճանապարհն եւ։

Նա պետք ե ունենա իր լավ մտածված և մշակված ծրագիրը։ Այս ծրագրում պետք ե նախատեսնված լինի կոոպերատիվ առանձին ողակների մի համաշտի սիստեմի մեջ սերտ կապակցությունը և վոչ մի ողակ չպիտի խանգարի այս համաչափությունը։ Վոչ մի կոոպերատիվ

չպիտի այդ սիստեմից դուրս մնա և պուանձին աշխատանք տանի։ Կոոպերատիվ սիստեմի այս ողակներից մեկն ել հանդիսանում ե կոոպերատիվ ապահովագրությունը։ Պետությունը հրատարակելով կոոպերատիվ շինարարության մասին որենքներ, նախատեսել ե նաև այն, վոր կոոպերացիան կարող ե կազմակերպել իր փխադարձ ապահովագրությունը։

Յեթե այս գործը հանդիսանում ե կոոպերատիվ ընդհանուր շղթայի ողակներից մեկը, յեթե այս ողակը նախատեսնված ե կառուցման ընդհանուր գործով և որենսպրությամբ, ապա արհամարհել այն չի կարելի։ Կոոպերատիվ ապահովագրման հիման վրա, գանձված ապահովագրման բոլոր հատուցումները մնում են կոոպերացիայի տրամադրություն տակ, դառնում են նրա իսկ միջոցները։ Ամբողջ կոոպերացիան և ամեն մի կոոպերատիվ, կումանա և կոլտնտեսություն մնում են այս միջոցների տերերը և հետագայում։ Կոոպերատիվ ապահովագրման միջոցով գանձված բոլոր գումարները, ինչպես ասված երգերում, կոոպերատիվ Առահովագրական Միության կողմից պահպան են բանկում, ուժեղացնում են նրա հզորությունը և դրանով իսկ հսարավորություն են տալիս ուժեղացնել վարկավորման հսարավորությունը։ Անա թե ինչու

բոլոր կոլտնտեսությունները պետք ե իրենց գույքը ապահովագրեն կոռպերատիվ Ապահովագրական Միությունում:

## ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՑԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

